Հայ-Ռուսական համալսարանում գործող
իրավագիտության 063 մասնագիտական խորհրդին
(հասցե՝ 0051, ք. Երևան, Հովսեփ Էմինի 123)

ԿԱՐԾԻՔ

ՊԱՇՏՈՆԱԿԱՆ ԸՆԴԴԻՄԱԽՈՍ, ԻՐԱՎԱԲԱՆԱԿԱՆ ԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԹԵԿՆԱԾՈՒ ՀՐԱՆՏ ՆԱԶԱՐՅԱՆԻ

Մուշեղ Բաբայանի՝ «Մասնավոր կյանքի անձեռնմխելիության իրավունքը (Համեմատական վերլուծություն)» վերտառությամբ՝ ԺԲ.00.02- «Հանրային իրավունք՝ սահմանադրական, վարչական, ֆինանսական, մունիցիպալ, բնապահպանական, եվրոպական իրավունք, պետական կառավարում» մասնագիտությամբ իրավաբանական գիտությունների թեկնածուի գիտական աստիճանի հայցման համար ներկայացված ատենախոսության վերաբերյալ

Ատենախոսության թեման առավել քան արդիական է: Ժամանակակից աշխարհում թվային հեռահաղորդակցության նոր տեխնոլոգիաների կիրառումը, հանրային և մասնավոր կառույցների կողմից անձնական տվյալների մշակումը, պահպանումը, կիրառումը հանցագործությունների աճը, համացանցի (սոցիալական ցանցերի) օգտատերերի ոչ պատշաճ (վիճահարույց) վարքագիծը, ինչպես նաև հանրային իշխանության մարմինների կողմից՝ անվտանգության նկատառումներով ձեռնարկվող միջոցառումները, հաճախ հանգեցնում են մասնավոր կյանքի անձեռնմխելիության իրավունքի ոչ իրավաչափ սահմանափակմանը: Ինչպես տեսական, այնպես էլ գործնական անհրաժեշտություն է՝ միջազգային իրավական գործող չափանիշների հիման վրա մշտապես ուսումնասիրել այդ իրավունքի համարժեք ընկալման ու կիրառման պրակտիկան, մասնավոր կյանքի անձեռնմխելիության իրավունքի իրացման, իսկ անհրաժեշտության դեպքում նաև սահմանափակման թույլատրելիության սահմանները: Հետևաբար, նկատի ունենալով հատկապես՝ հանրային և մասնավոր շահերի պաշտպանության և ներդաշնակեցման

երաշխավորման համատեքստում այդ իրավունքի իրացման արդյունավետ կառուցակարգերի և ընթացակարգերի մշտապես կատարելագործման իրավական կարևորությունը, այդ բնագավառի տեսական հետազոտություններն ոչ միայն արդիական են, այլև հրատապ ու անհրաժեշտ: Հասարակական կյանքի բուռն թվայնացումը, այսպես կոչված տեխնոլոգիականացումը և ինֆորմատիզացիայի անխուսափելիությունը, արհեստական բանականության ազդեցության հետզհետե ընդլայնումը, ինչպես նաև ողջ համաշխարհային հանրության արժեքների և նպատակների գլոբալ վերափոխման աննկուն գործընթացը, հանգեցնում են անձնական անձեռնմխելիության իրավունքի ամբողջականության հայեցակարգի հետևողական հստակեցման անհրաժեշտությանը: Մարդկային արժեքների ամբողջացման ներկայիս համընդհանուր գործընթացը պահանջում է մշտապես հստակեցնել ու կատարելագործել սոցիալական կյանքի հիմնական արժերանական կանխադրույթների կայունությունն ու անձեռնմխելիությունը այդ թվում եւ՝ մարդու կյանքի անձեռնմխելիության իրավունքի իրացման շրջանակներում:

ՀՀ-ում հասարակական-քաղաքական կյանքի զարգացման եւ դրա իրավական կարգավորման մշտապես կատարելագործման եւ մասնավորապես՝ 2015 թվականի փոփոխություններով Սահմանադրության իրավական-արժերանական լիարժեք ու ամբողջական ընկալման համատեքստում, մասնավոր կյանքի անձեռնմխելիության սահմանադրաիրավական նրաշխիքների ապահովման վերաբերյալ հետազոտություններն ու ուսումնասիրությունները ձեռք են բերում առանձնակի կարևորություն և արդիականություն: Մասնավոր կյանքի պաշտպանության պահանջներին համապատասխանող օրենսդրությունը մեր հասարակության կայուն եւ երդաշնակ զարգացման, հանրային կառավարման արդյունավետության ապահովման առանցքային տարրերից մեկն է: Հետևաբար, մասնավոր կյանքի անձեռնմխելիության պաշտպանության իրավական հիմքերի ուսումնասիրումը մշտապես զարգացում ապրող իրավունքի բնագավառ է: Այս առումով՝ տեսական եւ գործնական կարևորություն է ներկայացնում այդ իրավունքի թե՛ միջազգային եւ թե՛ ներպետական կիրառական փորձի համեմատական վերլուծությունը, եւ որ առավել կարեւոր է՝ արված եզրահանգումների շրջանակներում՝ ՀՀ օրենսդրության հետագա զարգացումն ուղենշելը:

Պաշտպանության ներկայացված ատենախոսության հեղինակը նպատակ է հետապնդել միջազգային փորձի ուսումնասիրության արդյունքներով եւ ներպետական օրենսդրությունում միջազգային իրավական չափորոշիչների համադրմամբ պայմանավորված՝

բացահայտել մարդու եւ քաղաքացու մասնավոր կյանքի անձեռնմխելիության սահմանադրական իրավունքի զարգացման հիմնական օրինաչափությունները եւ դրանց ազդեցության տեսագործնական հիմնախնդիրների գիտական ուսումնասիրության արդյունքում՝ ուրվագծել այդ իրավունքի պաշտպանության իրավական երաշխիքների էությունն ու բովանդակությունը, ներկայացնելով այն՝ Հայաստանի Հանրապետության իրավական համակարգի արդիականացմանն ուղղված իրավաստեղծ եւ իրավակիրառ գործունեության ուղղությունների ու առկա կառուցակարգերի մշտապես կատարելագործման համատեքստում:

Այս առումով խրախուսելի է հեղինակի կողմից տեսագործնական հարցադրումների նման ընդգրկմամբ աշխատանք ներկայացնելը, որի հիմքում առաջադրված են հետազոտական կարևոր նշանակություն ունեցող այնպիսի խնդիրներ, ինչպիսին են՝

- պարզել մարդու և քաղաքացու մասնավոր կյանքի անձեռնմխելիության սահմանադրական իրավունքի էության ու բովանդակության տեսական իրավական առանձնահատկությունները,

- ուսումնասիրել մասնավոր կյանքի անձեռնմխելիության սահմանադրական իրավունքի զարգացման և իրավական հիմքերի ձևավորման պատմական նախադրյալները,

- իրականացնել մասնավոր կյանքի անձեռնմխելիության սահմանադրական իրավունքի իրականացման ու պաշտպանության համեմատական իրավական հետազոտություն և վերլուծություն,

- առաջադրել մասնավոր կյանքի անձեռնմխելիության՝ որպես սահմանադրական սկզբունքի իրավաընկալման ժամանակակից ու կիրառելի սահմանում, որը կարտահայտի ոչ միայն այդ սկզբունքի կիրառման գործնական նշանակությունը, այլև համահունչ կլինի Հայաստանի Հանրապետության ստանձնած միջազգային պարտավորություններին,

- բացահայտել մասնավոր կյանքի անձեռնմխելիության իրավունքի պաշտպանության երաշխավորման և սահմանափակման հիմնական հիմքերն ու սկզբունքները,

- կատարել մասնավոր կյանքի անձեռնմխելիության իրավունքի՝ որպես մարդու և քաղաքացու հիմնարար իրավունքի համեմատական վերլուծություն,

- բացահայտել մասնավոր կյանքի անձեռնմխելիության իրավունքի միջազգային իրավական չափորոշիչները և Հայաստանի Հանրապետության իրավական համակարգում դրանց ներդաշնակեցմանն ուղղված հնարավորությունները,

- ուսումնասիրել հանրային իշխանության դերի ազդեցությունը մարդու մասնավոր կյանքի անձեռնմխելիության իրավունքի ապահովման համատեքստում,

- վեր հանել Հայաստանի Հանրապետությունում մասնավոր կյանքի անձեռնմխելիության իրավունքի իրացման հետ կապված ներկայիս հիմնախնդիրները և առաջարկել դրանց լուծման գործուն և արդյունավետ ուղիներ:

Պետք է նշել, որ հեղինակը գիտական բարեխղճությամբ ու անհրաժեշտ հետազոտական խորությամբ է անդրադարձ կատարել նախանշված խնդիրներին համապարփակ վերլուծության ենթարկելով մասնավոր կյանքի անձեռնմխելիության որպես սահմանադրաիրավական առանձնահատուկ ինստիտուտի, ճանաչման, երաշխավորման ու ապահովման հիմնախնդիրները՝ միաժամանակ բացահայտելով այդ իրավունքի տեղն ու դերը մարդու սահմանադրական իրավունքների համակարգում: Այս համատեքստում հեղինակը մանրամասնել է նաև այդ իրավունքի ծագման և զարգացման պատմական գործընթացը այդ թվում նաև հայոց պետության եւ իրավունքի զարգացման շրջանակներում՝ դրանով իսկ հիմնավորելով ու վերահաստատելով հայոց հին եւ միջնադարյան իրավունքի ազգային ինքնատիպ էությունն ու դերը՝ անհատ-հասարակություն փոխհարաբերությունների համակարգում:

Ընդհանուր առմամբ՝ հեղինակն ուսումնասիրել է համարժեք մասնագիտական գրականություն և վերլուծել թեմային առնչվող գիտագործնական ծավալուն նյութեր: Հեղինակը դրսևորել է թեմային առնչվող տեսական աղբյուրների համարժեք իրազեկվածություն, ինչպես նաև դրանցից օգտվելու և պատշաճ վերլուծություններ կատարելու անհրաժեշտ ունակություն: Ուսումնասիրելով մասնավոր կյանքի անձեռնմխելիության, որպես սահմանադրական իրավունքի, իրավաբանական ժամանակակից հիմնախնդիրները եւ դրանց վերաբերյալ ՄԻԵԴ եւ ՀՀ Սահմանադրական դատարանի, ՀՀ վճռաբեկ դատարանի որոշումներում արտահայտված իրավական դիրքորոշումները, ատենախոսության հեղինակը փաստագրելով մասնավոր կյանքի անձեռնմխելիությունը, որպես բովանդակային առումով ընդգրկման ընդարձակ շրջանակ ունեցող իրավունք, դիտարկել է այն նաև՝ ՀՀ Սահմանադրությամբ ամրագրված այլ իրավունքների՝ անձնական եւ ընտանեկան կյանքի, պատվի ու բարի համբավի, բնակարանի անձեռնմխելիության, հաղորդակցության գաղտնիության եւ ազատության, անձնական տվյալների պաշտպանության իրավունքների հետ համակարգային բազմաբովանդակ կապի շրջանակներում, հանգելով այն եզրակացությանը, համաձայն որի՝ մասնավոր կյանքի անձեռնմխելիության իրավունքը յուրաքանչյուր դեպքում անհատի այլ հիմնական սահմանադրական

իրավունքների հետ փոխկապակցվածության եւ համակցության մեջ դրա բովանդակության բացահայտումն ու կիրառման շրջանակների պարզումը կարող է էական եւ որոշիչ դերակատարում ունենալ անհատի իրավունքներն արժանապատիվ կերպով իրականացնելու հնարավորության երաշխավորման գործում:

Վերոհիշյալ դիտարկումների շրջանակներում ատենախոսության հեղինակը նպատակ է դրել կանխորոշելու՝ ՀՀ իրավական համակարգի արդիականացումը եւ մասնավոր կյանքի անձեռնմխելիության իրավունքի պաշտպանությունը միջազգային իրավական չափորոշիչներին համապատասխան երաշխավորելուն միտված զարգացումների հնարավոր ուղղությունը:

Ատենախոսության կառուցվածքը հնարավորություն է տվել ընտրված հարցադրումների առնչությամբ նյութի շարադրանքը դարձնելու առավել տրամաբանական ու ամբողջական, մասնավորապես՝ առանձին հիմնահարցերի համակողմանի ուսումնասիրությունը նպաստել է մասնավոր ու կոնկրետ խնդիրների ամբողջական հետազոտությանը եւ վերջինիս հիման վրա արված անհրաժեշտ եզրահանգումներին:

Հեղինակի կողմից ատենախոսության հիմնադրույթներին առնչվող հրատարակված աշխատությունները համարժեքորեն են արտացոլում պաշտպանության ներկայացված եզրահանգումները:

Ատենախոսության ուսումնասիրությունը ցույց է տալիս, որ հեղինակը դրսեւորել է ինքնուրույն հետազոտություն կատարելու և դրանց արդյունքում հնարավորինս ինքնատիպ ու որոշակի հիմնավորումներով ուղեկցվող դատողություններ անելու անհրաժեշտ ունակություն:

Ատենախոսությունը շարադրված է հստակ եւ միաժամանակ պատշաճ գիտական լեզվառճով. հեղինակը կարողացել է ապահովել նյութի շարադրանքի ներքին տրամաբանությունը:

Ընդհանուր առմամբ աշխատանքն առանձնանում է պատշաճ լեզվառճով, դրանում հեղինակն իր իրավական մտածելակերպի առանձնահատուկ ու ինքնատիպ ոճով կարողացել է ապահովել ինչպես նյութի շարադրանքի որակը, այնպես էլ աշխատանքի հստակությունը՝ պայմանավորված սեփական դատողությունների հիման վրա ներկայացված մեթոդաբանական ու տեսական-իրավական անհրաժեշտ փաստարկներով ու հիմնավորումներով:

Ատենախոսությունում պաշտպանության ներկայացված հիմնադրույթները համարժեքորեն արտացոլված են հեղինակի կողմից հրատարակված գիտական հոդվածներում: Սեղմագիրն արտացոլում է ատենախոսության հիմնական դրույթներն ու բովանդակությունը:

Պաշտպանության ներկայացված հիմնադրույթները հիմնականում համապատասխանում են ներկայացվող պահանջներին՝ հիմնավորվածության չափանիշներով: Այնուամենայնիվ, անհրաժեշտ է նշել, որ հեղինակի կողմից արված եզրահանգումները գիտական նորույթի հիմնավորվածության առումով, առավել հստակեցման կարիք ունեն: Պետք է նշել նաեւ, որ հեղինակն իր եզրահանգումներում հանգելով մի շարք հետեւությունների մասնավորապես արձանագրելով, որ. «իրավական մտքի զարգացման արդի գործընթացները, ի վերջո հանգեցնելու են այս խիստ կարեւոր իրավունքի համընդհանուր կարգավորիչ մեխանիզմների եւ գործիքակազմերի սահմանմանը եւ ազգային օրենսդրություններում անձնական կյանքի անձեռնմխելիության իրավունքի պաշտպանության կապակցությամբ դրանց միատեսակ կիրառմանը», հանգել է այն հետեւությանը, որ «ներպետական մակարդակում խնդրի լուծումը կարելի է տեսնել առանձին օրենքով մասնավոր կյանքի անձեռնմխելիությանը վերաբերվող հարցերի կարգավորմանը» չհստակեցնելով, թե իրավակարգավորման ինչպիսի հայեցակարգային մոտեցումների շրջանակներում է նախընտրելի այդ խնդրի իրավական լուծումը: Նույնպիսի հստակեցման կարիք ունի նաեւ «իրավական ավանդույթների, նախադեպերի, պրակտիկայի բացակայությունը», ինչպես նաեւ՝ «իրավապահ և իրավակիրառ մարմինների փորձի պակասը» հաղթահարելու անհրաժեշտության վերաբերյալ հեղինակի օբյեկտիվ դիտարկումը:

Այնուամենայնիվ, անհրաժեշտ է նշել, որ հեղինակի կողմից արված եզրահանգումները հիմնականում բխում են ատենախոսության ընդհանուր տրամաբանությունից, համապատասխանում են առաջադրված նպատակներին ու խնդիրներին, իսկ վերոնշյալ նկատառումները բոլորովին չեն կարող ազդել աշխատանքի դրական արժանիքների վրա:

Հաշվի առնելով վերոգրյալը՝ կարծում եմ, որ Մուշեղ Ավետիքի Բաբայանի՝ **«Մասնավոր կյանքի անձեռնմխելիության իրավունքը (Համեմատական վերլուծություն)»** թեմայով իրավաբանական գիտությունների թեկնածուի գիտական աստիճանի հայցման համար ներկայացրած թեկնածուական ատենախոսությունը համապատասխանում է Հայաստանի Հանրապետության կառավարության 1997 թվականի օգոստոսի 8-ի թիվ 327

որոշմամբ հաստատված «Հայաստանի Հանրապետությունում գիտական աստիճան նաշնորհման կանոնակարգի» 7-րդ կետի պահանջներին, իսկ հեղինակն արժանի է ԺԲ.00.02 գիտական թվանշանով՝ «Հանրային իրավունք՝ սահմանադրական, վարչական, ֆինանսական, մունիցիպալ, բնապահպանական, եվրոպական իրավունք, պետական կառավարում» մասնագիտությամբ իրավաբանական գիտությունների թեկնածուի գիտական աստիճանի շնորհմանը:

Պաշտոնական ընդդիմախոս,
իրավաբանական գիտությունների թեկնածու՝

Հ.Ա.ՆԱԶԱՐՅԱՆ

25 դեկտեմբերի 2024թ.

Հրանտ Նազարյանի ստորագրությունը հաստատում եմ՝

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ HUMAN RESOURCES DEPARTMENT